ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/25, 11.02.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Արֆարմացիա» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Դեղորայքի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Պարտավորեցնել փոփոխել ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3 ծածկագրով գնահատող հանձնաժողովի 05.02.2020թ.-ի N 2 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշումը և գնման առարկայի 144-րդ չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Արֆարմացիա» ՓԲԸ-ին պարտավորեցնելով «Քաջաբանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին վերոհշյալ չափաբաժնով սահմանված ապրանքի մատակարարման պայմանագիր կնքել:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ.ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Լևոն Օհանյանին

Բողոքաբեր՝ <<Արֆարմացիա>>ՓԲԸ
Տնօրեն՝ Աննա Հովհաննիսյան
ՀՎՀՀ 02505735
Իրավաբանական անձի գրանցման համար 286.120.02608
գրանցված՝ 14.02.1997թ.
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պուշկին 56

Պատվիրատու՝ <<Քաջարանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ

հասցե՝ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Բակունցի 1

գնման ծածկագիր՝ ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3
առարկա՝ <<Քաջարանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ
կարիքների համար Դեղորայքի ձեռքբերում

Բողոք

Կրկին Ձեզ է ներկայացվում 11.02.2020թ. որոշմամբ վերադարձված բողոքը՝ դրանում առկա թերությունները շտկված տարբերակով:

ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3 ծածկագրով գնահատող հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ 2020թ. հունվարի 19-ի N 2 որոշմամբ հրավեր է ներկայացվել <<Քաջարանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի կարիքների համար Դեղորայքի ձեռքբերման նպատակով:

Վերոնշյալ գնման հրավերի 1.1 կետով սահմանված գնման առարկայի 144-րդ չափաբաժնում նախատեսված է գնել ֆենտանիլ, որի մատակարարման համար հայտ է ներկայացվել նաև <<Արֆարմացիա>>ՓԲԸ-ն:

Հանձնաժողովի 05 փետրվարի 2020թ.-ի ժամը 12:30 կազմվել է թիվ 2 արձանագրությունը, որի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցներից <<Արֆարմացիա>>ՓԲԸ-ն 144-րդ չափաբաժնով գնման առարկա <<ֆենտանիլ>>-ի համար առաջարկել է 105000 /հարյուր հինգ հազար/ դրամ, իսկ *մասնակիցներից <<Վագա Ֆարմ>> ՍՊԸ-ն* նույն չափաբաժնի գնման առարկայի համար առաջարկել է 42500 /քառասուներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Գնահատող Հանձնաժողովը որոշել է գնման առարկայի 144-րդ չափաբաժնում ընտրված մասնակից ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<Վագա Ֆարմ>> ՍՊԸ-ին:

<<Վագա Ֆարմ>> ՍՊԸ-ի կողմից <<ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3>> ծածկագրով գնանշման հարցման շրջանակում 144-րդ չափաբաժնով առաջարկվող <<ֆենտանիլ 0.05 մգ/մլ, ամպուլներ 2մլ, լուծույթ ն/ե և մ/մ ներարկման>> ապրանքի նկարագրում որպես առաջարկվող ապրանքի մակնիշ և արտադրողի անվանում նշվել է **Գրինդեքս, Լատվիա**:

<<ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 168-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կարգի 1-ին կետի զ) ենթակետի համաձայն՝ ապրանքների գնման

դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

«ՔԱՋԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀՐԱՎԵՐԻ 4.3 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և **արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):**

Ըստ <<Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն>>-ի կայքի՝ http://pharm.cals.am/pharm/drug_images/index.php, <<Ֆենտանիլ Կալցեկս>> դեղորայքի արտադրողը հանդիսանում է <<Կալցեկս>> ԲԲԸ-ն /երկիրը՝ Լատվիա, գրանցված է մինչև 26.02.2021թ./:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման հավելված N1 գնումների կազմակերպման կարգի 33-րդ կարգի 8 կետի համաձայն՝ Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունքունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջին սպարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Համաձայն <<Դեղերի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի. **կեղծ դեղ, կեղծ դեղանյութ՝** արտադրանք, որը կանխամտածված և (կամ) խաբեությամբ ներկայացված է իսկության (ներառյալ՝ փաթեթավորում, պիտակավորում, անվանում, բաղադրակազմ, առանձին բաղադրատարրերի քանակներ) և (կամ) ծագման (ներառյալ՝ **արտադրող**, արտադրման երկիր, ծագման երկիր, գրանցման հավաստագրի իրավատեր) և (կամ) բաշխման շղթայի տվյալների (ներառյալ՝ արձանագրություններ, ուղեկցող փաստաթղթեր) ոչ ճիշտ տեղեկատվությամբ:

Համաձայն նույն օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի. Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, բաց թողնել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

Իսկ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն. Գրանցման ենթակա են դեղերի յուրաքանչյուր անվանում, բաղադրակազմ, դեղաչափ, դեղաձև, թողարկման ձև, նոր ցուցում, **արտադրող**

(ներառյալ՝ յուրաքանչյուր արտադրական գործընթացն իրականացնող), գրանցման հավաստագրի իրավատեր:

Այսպիսով, <<Վազա Ֆարմ>> ՍՊԸ-ի կողմից գնման առաջարկի 144-րդ չափաբաժնում արտադրող մասը պարունակում է կեղծ տվյալ այն է՝ համաձայն ՀՀ-ում գրանցված դեղի տվյալների <<Ֆենտանիլ Կալցեկս>> դեղորայքի արտադրող հանդիսանում է <<Կալցեկս>> ԲԲԸ-ն, այլ ոչ թե Գրինդեքս ընկերությունը, Գրինդեքս ընկերության որպես <<Ֆենտանիլ Կալցեկս>> դեղորայքի արտադրողի բացակայում են: Արտադրողի վերաբերյալ **սխալ/կեղծ տվյալ ներկայացնելը** հիմք է պայմանագրի չկնքման և <<Վազա Ֆարմ>> ՍՊԸ-ի նկատմամբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ընդգրկելու ընթացակարգ նախաձեռնելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալ փաստական և իրավական հիմնավորումները և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով խնդրում եմ փոփոխել ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3 ծածկագրով գնահատող հանձնաժողովի 05.02.2020թ.-ի N 2 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշումը և գնման առարկայի 144-րդ չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<Արֆարմացիա>>ՓԲԸ-ին՝ պարտավորեցնելով <<Քաջարանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ին վերոնշյալ չափաբաժնով սահմանված ապրանքի մատակարարման պայմանագիր կնքել:

Միաժամանակ խնդրում եմ բողոքը բավարարելու դեպքում բողոքարկման վարձը փոխանցել <<Արֆարմացիա>>ՓԲԸ-ի<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ 163008100220 հաշվեհամարին:

Բողոքին կից փաստաթղթերը գտնվում են 10.02.2020թ. ներկայացված բողոքին կից:

<<Արֆարմացիա>>ՓԲԸ-ի տնօրեն՝ Ա. Հովհաննիսյան

11.02.2020թ.